


ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱՊԻՐ
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՎԱՍՏԱԿ ԿԱԾ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԱԿ ԱՌ
ԽՈՒՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌՅԱՆ ՄԱՍԻՆ
ԳԱԶԻՐԷ (Հասցեագրման)

Rédaction du Journal arménien
ARCHALOUICE
HABBANIEH LE CAIRE (Égypte)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՇԱԲԱԹ	
Տարեկան, ողջ դահլիճ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Փրակք 20	
Վեցամսեայ » 12	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆ ԵՒ
ԵՒ ՔՂԱՔԱԿԱՆ ԾԱՄԱՔ
ԽՈՒՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱՅ:
ԽՈՒՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՂՂՈՒՄ
ԳՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԶՆՆՈՒՄ:

ԱՌ Ն. ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ
ԻԺԽԱՆ ԳՈՒԻՏՕՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԵՆՐՀԱԿԱՒԻՔ

Լսարան-Ընթերցատուն ընկերության Պատ. Գործ. ժողովին մեզ ուղղուած նամակ մը, կը փութայ յայտարարել մեր ընթերցատունը ու մանաւանդ մեր ազնուաշուք ազգայնոց թէ՛ շնորհակալութեամբ ստացած է Նորին Արք. Բարձրութեան Իշխան Գուրգոս Լուսինեանի քաջապատիւնով մի պատասխանագիրն՝ Գործ. ժողովոյ Երջարեքականին:

Այս գրոյն մէջ, Նորին Բարձրութեան ներփակած է գումար մը ի նուէր եւ Լսարան-Ընթերցատան զրկելու խոստումը ըրած, իւր հրատարակած բոլոր երկամիտութիւններէն մէկ մէկ օրինակ, որոնք շատ գնոց ըլլալէն զատ, չեք նաղագիւտ են այժմ:

Գործ. ժողովոյ սոյն շնորհակալաց նամակն եւ Նորին Բարձրութեան ըրած յոյժ քաջակրօնական նուէրն, պոփթ կուտայ մեզ անգամ մը եւս շնչուելու թէ՛ այս նորակազմ ընկերութիւնը շատ պէտք ունի նիւթապէս եւ բարոյապէս քաջապատելու, որուն ամենագեղեցիկ եւ անդրաճիկ օրինակը Եգիպտոսայ վսեմաշուքներուն կ'ընծայէ Փարիզէն, ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆ ԳՈՒԻՏՕՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ:

Այս բարեպատեն առթիւ՝ Լսարան-Ընթերցատան Գործ. ժողովը չէ՛ միայն, որ իւր հրապարակային շնորհակալութեան կը ներկայանայ Նորին Բարձրութեան, այլ անոնց կը ձայնակցի «Արշալոյս» ի մեզագրութիւնը եւ Եգիպտոսայ հայութեան յառաջդիմանէր դասակարգը, այն ժողովըրդառէր եւ զարգացման համակիր իշխանին, որուն կրթամտական զգացումներէն բղիւսած բիւր բարիքներն ալ ու ձախ ամենուրեք արձանագրուած են:

Ուր յառաջդիմական ձեռնարկ մը, հոն ամենէն առաջ աչքի կը զարնէ Նորին Բարձրութեան իշխան Գ. Լուսինեանի անունը եւ օժանդակութեան նուէրը. ահա անոնց կարգը պէտք է դասել նաեւ Գահիրէի Լսարան-Ընթերցատունը:

ԱՌԱՋՆՈՐԴԻ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Երեսփոխանական ժողովը անցեալ կիրակի ի նիստ գումարուեցաւ, օրակարգի գլխաւոր նիւթ օճենալով Եգիպտոսի Առաջնորդութեան խնդիրը:

Ընտրուած է Եղիշէ Եպիսկոպոս Գուրեան:

Այս անգամ երկուրեակ որոշումի մը—

ինչպէս իզմիրեան եւ Այվազեան միասին ընարուեցան վերջնութեւր նիստին մէջ — անյարմարութիւնը, չ'ըսելու համար գայթակղութիւնը, ինչպէս ինչպէս է հասարակութեան:

Բարենի՛շ մը, ուրեմն, մեր յարգելի երեսփոխան ԵՃԵՆՏԻՆԵՐՈՒՆ. շիտակը՝ կարժէ . . .

Ասիկա քսել չէ որ պահանջկոտ միտքեր — օմանք քիչ մը անկեղծութեամբ, ոմանք ալ քիչ մը շարածհիւթեամբ — բնաւ տրամադիր չ'են անընդունելի նկատելու ապօրէն կերպով կազմուած Այգ. մարմնի մը նոյն իսկ մէկ օրինաւոր որոշումը: Օ՛հ. ընդհակառակը:

Սակայն, երեսփոխանական ժողովը իր ներկայ ձեւին տակ անդարձ իրողութեան մը մարմնացումն է — հակառակ բոլորքագիր-հանրագրին որուն արտագրելիք տպաւորութիւնը պէտք էր կանխաւ գեղջած ըլլային անոնք, որ զայն պատրաստելու աշխարհաց միամիտ նախաձեռնութիւնն ունեցան: Կը մնայ ուրեմն ժողովրդին այլեւ չը խորհիլ անօգուտ կերպով՝ արմատական միջոցներու, հիմնական փոփոխութեանց:

Ինչ որ կրնայ եւ պարտի ընել, մասնաւոր արարքներու մշտական քննադատութիւնն է, որ է միակ արժանաւոր եղանակը իր դժգոհութիւնը արտայայտելու համար: Գործնական տեսակէտով, մեծ դարմանը, ինչպէս ամէն բանի համար արդէն, ժամանակն է:

Հետեւաբար՝ Եղիշէ Եպիսկոպոս Գուրեանի անուանումը իբր առաջնորդ Գահիրէի, պարտի գոհունակութիւն պատճառել, առանց երախտապարտ ընելու Երեսփ. ժողովին:

Որովհետեւ այդ որոշումը ուրիշ բան չէ, եթէ ոչ երջանիկ սխալ մը. felix culpa!

Արդարեւ, եթէ մեր պատուական վարիչները լաւ ըմբռնած ըլլային իրենց անուղղալ կամայականութեան շահերը, պիտի փութային փնտռել — եւ շուտ պիտի գտնէին, հաւատացէ՛ք — իրենց եսական կամքին հլու գործիք մը, ճկուն, հաճոյակատար, լեզուանի, ամեն բանի հիացող, երախտագէտ, վերջապէս՝ մէկ բառով, հրաժարեալ տեղապահին դպրոցէն ելած մէկը:

Արդ՝ ճշգիւ այս շնայաբարհիկ առաքիչութիւններն են որ կը պակսին Եղիշէ Եպիսկոպոս Գուրեանի:

Այս եկեղեցական անձնաւորութիւնը հայ կղերին ամենէն համակրելի ու յարգելի դեմքերէն մէկն է: Հայերէնի մասնագէտ մըն է. Պոլսոյ մէջ ամենէն ճոխ մատենադարանն ունի: Եւ յետոյ, լաւ պերճախօս մըն է, իր քարոզներուն ոճը չլրնայ բարդատուութեան դուրիւ այն ճառով, անգամ մէջ, արուեստակեալ լեզուին հետ, զոր ունակեղութեամբ անձրոյթն ունեցաւ ժողովուրդը երբ տեղապահը հրաժարած չէր: Իմաստալից, շահեկան ու պարզունակ Գուրեանի քարոզներն Գրագէտ-Անտուածաբանի մը տպաւորութիւնը կը թողուն ունկնդիրներուն վրայ:

Բայց ըստիւր խօսքերուն չափ եւ թերեւս անոնցմէ շատ աւելի՝ օգտակար գործերու պէտք կայ: Հաստատականութիւն, ձեռնարկութիւն, անշահախնդրութիւն, վարչական փորձառութիւն — ահա ինչ որ կատարելապէս անհրաժեշտ է ազգային գործերուն ներկայ վիճակը բարւոքելու և զայն հաստատելու համար իրաւունքի ու հանրային շահերու գերադասի սկզբունքներու հիման վրայ, փնտռելու համար համաձայնութեան խարխիս մը՝ վարչութեան եւ ժողովրդին միջև առկա ու պատահելիք խնդիրներու լուծման համար, նիւթական մատակարարութիւնը իր բուն նպատակին ծառայեցնելու, զեղծումներուն տեղի չ'տալու, մասնաւոր վարժարաններու աննախաձեռնի դրութիւնը բարւոքելու համար, վերջապէս եւ ի՛նչ գիտնամ, ինչու ինչ, որ պէտք է դժգոհութեանց պատճառները ջնջելու համար:

Կռի՛ւ, անհատներու կարծիք չ'կամուցութեանց դէմ, կռի՛ւ, իրերու կնճուտ թոհ ու բոհին դէմ — այս ամենը, իրաւ, ծաւր բեռ հայ եկեղեցականի մը բարոյապէս նիհարութեան համար, նոյն իսկ, թերեւս, Եղիշէ Եպիսկոպոս Գուրեանի մը համար, որուն կամքի ուժը, անշուշտ, կեղբոնացած ըլլալու է, մեծ մասամբ, իր այնքան սիրելի գիտական — բանասիրական գրազմանց վրայ . . .

ԱՐՏՕ

* Արշալոյս ի հրատարակութիւնը մէկ օր յայտարարուեցաւ պատճառը, թունական ծնունդին առթիւ թերթը սպող մամուլին փակ ըլլալն էր:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՂԵՔԱՆԴՐԻԱՅԷՆ

25 Դեկտեմբեր 1899

«... Թող փաշան գայ, որ այդ մարդիկը տեսնեն... Թող գայ փաշան, որ այդ տէրտէրիքն փրկունն ու վարդապետին մօրուքը վար առնենք... Թող փաշան գայ, որ այդ լրագրիւր խափանենք... այդ մարդուն երկար լեզուն կտրենք... Թող փաշան գայ... Թող փաշան մէկ մը գայ...?»

Ու վերջապէս փաշան կուգայ, գործողութիւնները կ'սկսին: Փաշան աղաներուն յենարանն է, յորթուխ սէյնիկին:

Իսկ մենք որ տարիներէ ի վեր ա'լ վարժուցանք այդ բանաձեւ դարձած սպառնալիքներուն, այդ աղա-փաշաներուն վրայ ա'յնպէս կը նայինք, ինչպէս որ եզրագծերուն արտերուն մէջ սնկըւած զօրխուլուիներուն վրայ կը նային թռչունները, որոնք քանի մը փորձերէ վերջ կամաց կամաց կ'ընտելանան անոնց ու նոյն իսկ յաճախ անոնց գաղաթին թառած կը հանգչին, կը կտցեն, կը կրծուտեն ու աւելի կը սրացնեն իրենց կտուցը եւ եզրագծերուն ուտելու ակործակը: Այսպէս ալ կարգ մը աղաներ, այնչափ փաշաներուն անունը ժողովրդի արդար պահանջներուն դէմ իբր զէնք գործածեցին, որ երբեմն գոնէ անոնց ձեւական պատկանանք ցոյց տուող ժողովուրդը ա'լ երես ելած՝ չ'ուզեր ճանչնալ փաշաներուն ըրած ո'ւեւէ մէկ կարգաբաժնի, հետեւաբար լարուած գրութիւն մ'է որ կը տիրէ փաշաներուն եւ ժողովրդին մէջ: Բայց իրաւունքը միշտ գործադրին ըլլալու անիրաւ ճշմարտութիւնը տարակոյս չի վերցնիր որ միշտ ժողովուրդին յաղթողը, խարող փաշաները պիտի ըլլան, քանի որ փաշայութիւնը ինքնատիւ քեան զօրութիւն մ'է ու անոր կցուած է ոսկին: Ե՛հ, ի՛նչ կ'արժէ ժողովուրդը ուրեմն:

«Վարք քեզի, վերք ինձի» արդէն շատոնց ըսուած է, երկու փաշաները համաձայնութեամբ երկու քաղաքները իրարու մէջ բաժնած ընկնուցած են արդէն: (Իսկ քս չի հասնիր թէ որո՞ւ մալը իրենց մէջ բաժնելու ելեր են, արդեօք կը սխալուին ու ազգային գործերն ալ ժառանգութիւն կը կարծեն): Եթէ վերի փաշային մէկ հրամանը կը բաւէ Օրմանեանի եկեղեցիէն վճարուած անուանը վերստին յիշատակելու, ինչո՞ւ մենք վարք Աղեքսանդրի մէջ վարի փաշային նոյնը չ'սպասենք. եթէ յաղթանակը շղթայով, բանտով վերի փաշան տարած է, այստեղ ալ նոյն բաները կան, ու եթէ Աղեքսանդրի փաշան այդ խնդրին մէջ բաւական յետ մնացած է իր բացակայութեան կը վերագրենք: Ամիսներէ ի վեր Պատրիարքը հոս չ'ընտանակուի շնորհիւ շրջահայեաց եւ ժողովրդեակէն թաղականութեան մը. փաշան հաղիւ հազ անու Պատրիարքի յիշատակութեան խնդրին ալ խուլ կերպով նորէն երեւան ելաւ:

Խորհուրդ, խորհուրդ ու խորհուրդ: Նոր տարուան մօտիկ սա Մոսկուի օրերուն մէջ նոր տեսակ «Խորհուրդ խորհիւ» երգող մենծ-աղաները ի՛նչ խորհին նէ աղէկ. «Տապալենք սա թաղականութիւնը. Փոխ-Ատենապետ X... էֆէնտի, դուն հրաժարականը տուր. դուն ալ, Y... էֆէնտի անոր հետեւէ ըսելով թէ՛ եթէ Փոխ-Ատենապետը կը հրաժարի ես ալ հրաժարականս կուտամ, այն ատեն ես ալ (փաշան) կ'ըսեմ թէ՛ իմ յոյսս արդէն X եւ Y էֆէնտիներուն վրայ էր, (ըսել է փաշան միւս անգամներուն իշու գլուխ է կարծեր) քանի որ անոնք կը հրաժարին թաղականութիւնը չեղեալ կը նկատեն. ուրեմն լուծեալ էք...»: Նոյնութեամբ տեղի կուենայ ու թաղականութիւնը կը լուծուի այնպէս, ինչպէս աղը ջրին մէջ: Փաշան նոյն նիստի մէջ իսկ անմիջապէս արձանագրել կուտայ թաղականութիւնը «չեղեալ» նկատել եւ անոնց տեղը «առժամանակեայ» նոր թաղականներ հրահրել. սա ալ գիւտանապետական մէկ ձեւ է որ երեւի թէ Գահիրէի միշտ գիւտեր ընող Դիւանատունէն հոս փոխադրուած է:

Այժմ թաղական չուենք, առժամանակեայ թաղական հրահրելէ վերջ օրուան հրատապ հարցերն են:

ՕՐԱԿԱՐԳ

Ա. — (Յայտնի) Առաջնորդական ընտրութիւն
Բ. — (Գաղանի) Օրմանեանի անուան յիշատակութեան աշխատիլ:

Գ. — Եթէ այս խնդիրներուն մէջ ժողովուրդը հակառակի եկեղեցին լեցնել ծպտեալ լրտեսներ, ոստիկաններ, շղթաներ եւ բանտը լեցնել՝ Հայեր...:

1900 Թուականը երեւի թէ կուով պիտի ողջուենք...:

Արդ, փաշաներ, պէյեր, տիրտոսաւորներ, անունով միայն հայեր, ձեզ կ'ըսեմ, ձեր կեանքը, ձեր ընկերական շրջանակը, ապրելու ձեւն ու միջավայրը ձեզ ազգային կեանքի գիտակցութիւնն ունենալ չեն կրնար ներշնչել. Դուք երբէ՛ք կրնաք հայութեամբ զգացողի, անոր գործերով լուրջ զբաղուիլ. ձեր տառապող եղբայրները 1900 Թուականի մուտքին վրայ կ'անգնած «Օրմանեանը թող չ'ընտելի...» կը պոռան. լսեցէ՛ք այդ անկեղծ սրտերէ ժայթքող ճիշդերուն. «Այսինչ եպիսկոպոսը մեզ առաջնորդ անանել կը փախաբնէք» պիտի աղաղակեն. ընտրեցէ՛ք ժողովրդի ընտրածը: Իսկ եթէ դուք կուզէք որ անպատճառ յիշատակել տաք Օրմանեանը, ձեր առանձինն ժամը չ'ենել տուէք ձեր տան թովբեր ու հոն ուղածնուղ չ'աի, ուզած ձեւովնուղ, եթէ՛ կուզէք, ո'չ միայն Օրմանեանի արդէս անարժան մէկը, այլեւ յիշատակել տուէք Վասակները, Մերութանները, Վեստ Սարգիսները, Սուրմակները, Աշքեանները ու եթէ կուզէք անոնց ամենուն գլուխը յիշել տուէք ձեր հաղաբար եղբայրները գլուխն ուտող Սուլթան Համիտը:

Փաշաներ, Պէյեր, ազգային ջոջեր, ազգային կեանքի մէջ ներկայիս ոչ մինիստրութեան գործ կայ ոչ ալ տիպլոստարտի, որ այդչափ ոտքով ձեռքով սթիտուած մէջ ընկեր էք. հաւատացէ՛ք մի անգամ ընդ միշտ թէ դուք ազգային կեանքի մէջ ուսմիկ հայ զիւղացու մը գիտակցութիւնն անգամ չուենք: Ու եթէ բաներ մ'ընել կուզէք, միթէ՛ ձեզ լուրջ գործեր կը պակսին. ճետաբարքուեցէ՛ք վարժարաններու ներքին կեանքով, ուր ազգի մանկիկը կը խողխողեն բուք դաճակներով. առաջնորդարանի պատերէն ներս նայեցէ՛ք, ուր գաղտնածածուկ էնթրիքստոնի գարանակալ ուսուցանակի պէս սարդի ոտային են ձգիր ճանձեր որսալու: Երուսաղէմի աւերակ տունները քոս բուերու հման. «Երուսաղէմ, Երուսաղէմ, վա՛յ քեզ» կը վայեն: Անչուք գերեզմանատներուն մէջ մեռեալները աղբակոյտներու մէջ կը թաւալին. ազգային կալուածները հառա՛չ մէջաթի կ'լած կը վաճառուին: Օր մը օրանց հետաքրքրուած էք ասոնցմով, դուք Փաշաներ: — Ո՛չ: Ուրեմն դուք ի՛նչ գործ ունիք ազգային գործերուն մէջ ունեցողութիւններ ընկու. սա առաջնորդի ընտրութեան, պատրիարքի յիշատակութեան խնդիրներուն մէջ. Դուք որ ո'չ առաջնորդի, ո'չ պատրիարքի պէտք ունիք ձեր տեղերը ծանր նստէք, ու եթէ կարելի է նոյն իսկ ազգային կեանքէն մի անգամ ընդ միշտ քաշուեցէ՛ք. դուք օտար էք մեր սրտին, ձեր ընտրածն ու որոշածներն ալ օտար են մեզ համար:

Աղեքսանդրի մէջ առ այժմ այնչափ, ուրիշ նորութիւն չկայ. միայն թէ ծովը գրգռուած է, բայց ոչինչ. ծովուն կատաղութիւնը կրնայ անցնիլ վաղը, միայն թէ փաշաներուն բարկութիւնն ալ ծովու պողպատեցնել չաի ըլլայ, որ եթէ այսօր կը գոռայ վաղն ալ գիտէ ձայն չ'հանել:

վիճակի մը մէջ գրուած էր: Այս յետապիմական քայլը ուրիշ բանի արդիւնք չէ, բայց եթէ նեղ մտքերու գործ, որոնք վարժարանին մէջ ոչ տղայ ունին ուսանող, ոչ ալ ազգական վարձատրուող պաշտօնեայ. ազգային սնտուկի ծախսերը շատ են եղեր, պիւտճէն նեղացունել պէտք է. ազգի տղայքը թող տուժեն, ինչո՞ւ սնտուկին փարան քանի մը որք տղայքներու համար սպասի: Մտտուկին մէջ գրամ պէտք է աւելցնել, շուտով առաջնորդի ընտրութիւն պիտի կատարուի, անոր ամսականը ինչո՞վ հոգալ. վարժարանէն կտրելով, պաշտօնեայէն կտրելով հարկաւ. ասոր կրնն «իշուն չի հասնիլ սեւերը ծեծել»: Փաշայ էֆէնտիներ, լաւագոյն չի՞ լինիր եթէ վարժարանը ամբողջովին գոցէք ու ամբողջ գրամը աւելցնէք. այն ատեն հաւատացէ՛ք որ մէկ առաջնորդի տեղը երկուք բերել կուտաք, ու եթէ կուզէք առաջնորդի տեղ Օրմանեան Պատրիարքը բերել կուտաք խաղալով խնդալով: Աղեքսանդրիան տալու մէջ այն կիթան կովուն կը նմանի՝ որ շարունակ կը կիթեն ու խոտ չ'են տար, բրթո՞ւ՛՛՛ մը գոնէ:

Այս արտաքոյ կարգի ժողովին գալով խելքս չի հասնիր թէ ինչո՞ւ Օթէլի մը մէջ պիտի կատարուի եւ այն ալ ոչ-պաշտօնապէս թաղական ճանչցուած ջօջերով. օթէլը, որչափ մենք գիտենք ճամբորդներուն համար գոյութիւն ունի, իսկ մեր առաջնորդարանի ժողովարանն ալ փլած չէ դեռ. ասկէ կ'եզրակացնեմ թէ ալ մեր աղաները մեծ մէջ իրենց նիստերը պիտի ընեն. լուսաւոր գործ մը կատարող մութը չընտրեր սակայն, աղաներու Բայց վստահ եղիք. սրատես աչքերը երբեմն դժոխքին մէջ ալ կարող են թափանցել ու ի լոյս բերել մութ մարդոց գործերը:

Ա.ՎՕ
Աղեքս. 27 Դեկտ. 99

ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ԽՆԴԻՐ

Բաղաքիս ծխախոտի գործարաններու մէջ աշխատող սիկարաձի աշխատակորները կը շարունակեն իրենց գործադուլը: Աշխատութիւնները վերսկսելու համար կը զած ձեռնարկները ցարդ սպարդիւն մնացած են:

Գործակորները կը պնդեն իրենց իրաւացի պահանջումին վրայ: Մի քանի գործարանատէրներ, եթէ այսպէս շարունակուին որոշած են եղեր գոցել իրենց գործարանները քան թէ գործաւորաց պահանջումին գոհացում տալ:

Կը լսենք թէ Մաթոսեան եղբարք եւս, որոնք այլեայլ պատճառներով միշտ հայ գործաւորները իբր դժուարահաճ կը ճամբէին և անոնց տեղը կը բանեցնէին ֆէլաւները, այժմ տագնապալից կայսութեան մը մէջ կը գտնուին. որովհետեւ այս վերջինները... չեն կարող հանդուրժել պայմանեալ վիճակին և իրենց դժգոհութիւնը կը յայտնեն ազդու և գործնական կերպով: Այս պատճառաւ յիշեալ ընկերութիւնը օրական սպառման համար պէտք եղած սիկարները բերել կուտայ Աղեքսանդրիայէն, փոխանակ գոհացում տալու այդ աշխատաւոր գործաւորներուն՝ որոնց աշխատութեան արտադրութեանն այնքան հարստացած ու մեծ անուն մը վաստակած են:

Միւս կողմանէ ուրախ ենք ըսելու թէ Չանաքլիսիս, Տիմիթրիսօֆ ու Վաֆիասիս, աւելի խղճամիտ ու կարեկից գտնուելով գործաւոր դասուն, գոհացում տուած են իրենց գործարաններուն մէջ աշխատողներուն:

Ա.ՎՕ

Ա Չ Ք Ա Յ Ի Ն

Արժ. Տէր Գաբրիէլ քահանայ Չէնճիր-
ճեան, որ իւր երկու որբ զաւակաց առող-
ջութիւնը դարմանելու համար Բէօսթէն-
ճէէն քաղաքս հասած է երկու երեք շա-
բաթէ ի վեր, մեր լսածներուն նայելով,
Վսեմ. Տիգրան փաշայի հրամանաւ Ս. Աստ-
ուածածին եկեղեցւոյ քահանայ կարգուած
է և միւսներուն պէս իրաւունք պիտի ու-
նենայ քահանայագործելու իբր պաշտօնեայ
Գահիրէի եկեղեցւոյն :

Արժ. Տէր Գաբրիէլ քահանայ իւր ան-
դրանիկ պատարագը մատուցած է :

Եթէ այս ստոյգ է, չինք կարծեր որ
Առաջնորդական փոխ-սեղապահի աթոռա-
կալ նախանձուտ քահանան հանգիստ ձգէ
նորեկը և հետեւաբար քիչ ատենէն պիտի
ստիպուինք քահանայական խնդրով ալ ըզ-
բաղել, որ այնչափ ախորժելի բան մը
չենք համարիր :

ՄԵՐ ՓԱՐԻՉԻ ԹՂԹԱԿՅԷՆ

ՄԵՐ ՈՒՍՈՆՈՂՆԵՐԸ. — Կը լսենք թէ
ատամնաբուժական ուսանող Պր. Հրանդ
Համամճեանը, ատամնաբուժական վարժա-
րանին մէջ քննութիւն անցնելով առաջին
մրցանակ ստացած է գործնական աշխա-
տութեանց, քիմիքի և դասընթացներու
չանասիրութեան համար: Քննութեանց մաս-
նակցող քսան և երկու աշակերտներէն միայն
մեր հայրենակցին առաջին մրցանակի ար-
ժանանալն լուր մ'է որ ամէն Հայու սիրտը
ուրախութեամբ կը լինէ: Վարժարանին
վարչութիւնը Պր. Հրանդ Համամճեանին
նուիրեր է երեք հատոր գրքեր որոնք իւր
արհեստին վրայ կը խօսին: Ուրիշ ուրա-
խալի լուր մ'ալ Մշնցի Տիգրան Դիմաք-
սեանի յաջողութիւնն է, որ կարողացաւ
այս տարի կամուրջներու և խճուղիներու
բարձրագոյն վարժարանը մտնել էնժէնէօր
լինելու համար: Յիրաւի այս պատանին որ
դեռ հազիւ 21 տարեկան է, նիւթական
բոլորովին անցուկ վիճակի մը մէջ Փարիզ
ապաւինելով, գրեթէ երկու տարի անխոնջ
և անվճատ կերպով աշխատելէն յետոյ վեր-
ջապէս կրցաւ բանալ Ecole des ponts et
chausséesի դռներն: Պր. Տիգրան Դիմաք-
սեան իւր յարատեւ աշխատութեան և իւր
նիւթական անցուկ վիճակին համար ամէն
կրթասէր հայու գնահատութեան և օժան-
դակութեան արժանի է :

Բանի որ կամուրջի և խճուղիներու
վարժարանին վրայ կը խօսինք յիշենք այս
գարնական տարւոյ վերջն, նոյն վարժա-
րանէն էնժէնէօր դուրս պիտի գան երկու
համակրելի հայ երիտասարդներ՝ Պր. Խա-
չիկ Սարգսեան և Նէտուրեան :

Տխուր լուր մ'ալ: Ս. յօր կը լսենք և
ամենայն վերապահութեամբ կը հրատա-
րակենք թէ հայ բժշկական ուսանողներէն
Պր. Վարդանեան որ իւր ուսմանց վերջերն
կը գտնուէր, չ'գիտենք ինչպէս մեռեր է :

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր

ՀՍՎԱՍԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՆԷՆ

ՓԱՐԻՉ, 4 Յունվար. — Վեհագոյն Ա-
տեանը տասը տարուան տարագրութեան
դատապարտեց Պր. Ֆիլէն և Տէրուլտը :

Պ. Կէրէն դատապարտուեցաւ տասը
տարուան բերդարգելութեան :

Միւս ամբաստանեալներն անպարտ ար-
ձակուած են :

ԲՍՓ 4 Յունվ. — Անգղիական բանակը
թողուց Տօրէխը :

ԼՕՆՏՕՆ 4 Յունվ. — Ժէնէրալ Ֆրէնչ
կ'երեւի թէ վերջնականապէս վրիպած է իր
Քօլէսպէրի յարձակման մէջ :

ՊԼՈՒԻՆ 3 Յունվ. — Գերմանական
թերթերը բուռն կերպով կը բողբեն Ան-
գլիական յաժառորակներու կողմանէ երկու
ուրհանդակ նաւերու արգիլման դէմ:
Կ'ըսուի թէ Կիյով կայսրը մինչև իսկ՝ այս
նկատմամբ գրած է Վիթթորիա թագուհոյն:

ԲՍՓ 3 Յունվ. — Ճակատամարտները
վերսկսան Քօլէսպէրի շուրջը :

ԼՕՆՏՕՆ 5 Յունվ. Մէքքիկի պահա-
պան զօրքը Դեկտ. 26ին փորձած է դուրս
ելնել. բայց 21 հոգի սպանուած են և 33
հոգի ալ վիրաւորուած :

ՌԻԻԹԷՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԻՆ ՀՅՈՒՍԳԻՐԸ

ԼՕՆՏՕՆ 7 Յունվ. — Պօստաները իջած
են, Ս. Բէթէրպպուրկէն հասնող կէս-պաշ-
տօնական լուրի մը հետեւանքով, որուն հա-
մեմատ Աֆղանիստանի կայսրութիւնը վըր-
դովիչ ներկայացնող վերջին աղմուկներուն
պատճառաւ, Ռուսիա իբր փորձ թիֆլիսէն
զինուորներ զրկած է Բրաննովտը, Պա-
քուի ճամբով՝ որպէսզի ապահովէ Կովկա-
սէն զօրաբանակի մը յառաջապահ դունդերը
8 օրուան մէջ Բուշկա զրկելու կարելիու-
թիւնը: «Թայմզսիֆինճիա» որ կը հաղորդէ
այս լուրը, երկիւղ կը յայտնէ որ Ռուսիա
ներկայ պատերազմէն չ'օգտուի, Կեդր. Ասիոյ
մէջ նոր բարդութիւններ ստեղծելու համար:
«Թուրքաստանի պաշտօնական Կազէթ» կը
յայտարարէ. «Ս. յապիսի ձեռնարկ մը հա-
կառակ պիտի ըլլար Ռուսիոյ քաղաքակա-
նութեան աւանդական ուղղամտութեան, որ

երբէք քայլ մը առած չէ Ասիոյ մէջ, առանց
ստիպուած ըլլալու պարագաներու անորո-
գելի ճնշման տակ և չը փափաքիր կնճռո-
տութիւններ յարուցանել, որքան որ իր
համակրութիւնը Պօէրներուն կողմն ըլլայ»:

— «Բրոնիք» օրաթերթէն կը քաղենք
հետեւեալը :

Առաջիկայ ամսոյ մէջ տեղի պիտի ու-
նենայ ամուսնութիւնը երկու Պօսալէյ Օ-
րիորդաց, որոնք հին Եղիպտոսցի մը, Պ.
Լարքիկի փոքրիկ աղջիկներն են :

Հարսանեաց հանդէսը կամ աւելի ճիշ-
դը հարսանեաց հանդէսները, տեղի պիտի
ունենան նորին Վսեմութեան Տիգրան փա-
շայի ապարանքին մէջ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բոլոր գերմանական թերթերը կը ծա-
նուցանեն թէ «Էսէն» Գրուբի գործարանը
Անգղիայէն ընդունած էր, Յունուար 4ին
յանձնելի՝ պողպատէ 25,000 ուսմբերու ա-
պարանք մը :

Երէք շաբաթէ ի վեր կ'աշխատին ա-
նոնց պատրաստութեանը համար: Թերթ-
թերթ միևնոյն ատեն ի վեր կը հանեն սա
հետաքրքրաշարժ կողմը թէ՛ այն գործա-
ւորները, որոնք կը շինեն Թրանսվալի մէջ
Անգղիոյ ծառայելիք ուսմբերը, իրենց մէջ
հանգանակութիւն մը բացած են Պօէրա-
կան շարժուն հիւանդանոցներուն համար :

ԼԷՏԻ ՌՕՊԷՐԹՍ. — Սքեռ կը գրէ
Լօնտօնէն. Լէսի Ռօպէրթս այս վայրկենիս
իբրև կին, աղջիկ ու մայր գինուորականի,
իրաւունք ունի համայն անգլիական ազգին
ամենախորին համակրանաց :

Իւր միակ որդին Ռօպէրթս տեղակալը,
«Թիւթէլայի» պատերազմին մէջ սպաննուե-
ցաւ. և միևնոյն օրն իսկ՝ երբ իւր զաւակին
մահը կ'սղբար, ստիպուած էր՝ հակառակ
իւր արցունքներուն զօրավիգ ըլլալ իւր
ամուսնոյն, որ Թրանսվալի Անգլիական զօ-
րագունդներուն հրամայելու կանչուած էր:

Լորտ Ռօպէրթս և իր կինը, իրենց միակ
մանչ զաւակը և երկու աղջիկները, Լորտ
Չէմպլըրէյնը և իւր ընտանիքը փոխադրող
չոգենաւով և միևնոյն շոգեկառքով Տըպի-
նէն Լոնտրա մեկնեցան:

Լորտ Ռօպէրթս և իւր ընտանիքը Տըպ-
լինի և Բէնկըսթիֆին մէջ ջերմագին հա-
մակրական ցոյցերու արժանացան:

ԼԱ ՄԻՉՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒՄ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա-
բաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ
իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ
աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս: ԼԷՌՍՐ Ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ զանազան ուրիշ որ և է ընկերութենէ
աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն-
ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յ'Ազգ. քանդակա.

Ամէն ո՞ր գիտէ նաև թէ Վիգթորիա Թագուհին Լորտ Ռօպէրթսի միակ որդւոյն մահուան առթիւ սիրալիր մխիթարական նամակ մը ուղղած է անոր, գովելով միանգամայն անոր մեծ հայրենասիրութիւնը, որուն ապացոյցը տուաւ մէկ կողմ գնելով իւր անձնական վիշտը և ինքզինքը նուիրելով ամբողջովին իր երկրին գործերուն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կեդրոնական կրթարանի Հիմնադիր Տնօրէն Տիար Ս. Բիւրատ ի գիտութիւն կրթասէր հասարակութեան կը ծանուցանէ թէ՛ նոյն հաստատութեան Կ. տարն շրջանը բոլորող վեցամեայ հարցաքննութիւնները տեղի պիտի ունենան յառաջիկայ 8 յունվարէն սկսեալ և պիտի տևեն 4 օր, ամեն օր առաւօտեան ժամը 10-12 և երեկոյեան ժամը 2-4 ի բաց առեալ հինգշաբթի օրը:

Եւ կը խնդրէ արգոյ ազգայիններէն որ հաճին իրենց ներկայութեամբ պատուել և քաջալերել երկսեռ ուսանողներն:

ԳՕԼԷԺ ՏԸ ԼԱ ՍԷՆԹ ՅԱՄԻՅԼ ՅԷԿԿԱԼԱ

Վերոյիշեալ Գօլէժի Տնօրէնութիւնն կը խնդրէ մեզմէ ծանուցանել հայ երիտասարդութեան թէ՛ նոյն հաստատութեան մէջ Անգլիերէն և Ֆրանսերէն լեզուաց ուսուցման համար, ցարդ գտնուած դասընթացքներու վրայ աւելցուցած է՝ ըստ խնդրանաց մի քանի հայ երիտասարդներու, մասնաւոր երկու դասընթացք ևս՝ մին Ֆրանսերէնի և և միւսն Անգլիերէնի համար, նոյն իսկ հայերէն լեզուաւ բացատրելի:

Ուստի կը հրաւիրուին փափաքողք որ դիմեն յիշեալ Գօլէժը, կիրակի օրերէ զատ ամեն օր ժամը 6էն մինչև 10, երեկոյեան դասախօսութեանց Տնօրէն Վ. Հայր Նուրիի, որ բացառաբար միայն հայ երիտասարդներ ի համար մասնաւոր զեղչերով պիտի արձանագրէ զիրենք:


ՅՏԱՄՆԱՌՅԺ

Տոկոսն և մարգարտաշար ակումներ ու առողջ լինտեր ունենալն ոչ միայն մարդու գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կարենալ ապրելու առաջին պայմանն է: Տիար Պետրոս Նիկողոսիմոս, վկայեալ ատամնաբոյժ, որ երկար ատեն Բարիզու մէջ ատամնաբուժութեամբ զբաղած և արհեստին նորանոր կատարելութեանց խիստ մօտէն հետեւած է, այժմ քաղաքս վերադարձած և էզպէքիյէ Ֆրանսէզ վաճառատան ճիշտ դիմացի արարթմանին մէջ ատամնաբուժական աշխատանոց մը հաստատած է, ուր ամեն օր պատրաստ է իրեն դիմողներն գոհացնել թէ արհեստին յաջողակութեան և թէ գնեալու յոյժ չափաւորութեան տեսակէտով:

Հինգշաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը 3էն 5 ձրի դարմանում:

Վ. Ա. ՃԱՍՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՅԻ
ՇԱՐԷ-Ա. ԴՏԻԻԼ-Ա. ԶԻ. Զ



Թէյի գործածութեան ընդհանրանալովն, թէյի ճաշակն ևս նորացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատե և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր ԶԻՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձրմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գնեալու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ կ. Պօլսոյ և գաւառացի և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վատահոլութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտաբուն թէյերու տեսակի, կօխի և զննց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեղի եղած ԿԱՆԻԻԿ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

7 — 50

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՐԻՐԱԹ Յ ՅՈՒՆՎԱՐ 1900

Ա. Թիւ	5824	չահած է	Ֆրանք	1000
Բ. "	7391	"	"	200
Գ. "	5452	"	"	100
Դ. "	5625	"	"	50
Ե. "	6423	"	"	50

Հետեւեալք 25 ական ֆրանք կը շահին

4225	2938	997	5979	2160	58
314	5032	2101	1360	3793	8583
8118	4742	5419	1234	2945	1526
	7538	882	877	8912	

ԾԱՆՅԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԻՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՄԻԹԵԱՆ

Վ. Ա. ՃԱՍՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ
ՅՕՆՕԿԻՐԱՅ

Գ. Ա. ՀԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՐԷ
Ս. և Ս. Սեմավիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և քօնաօլի ընտիր տեսակէ բանտիւններու մէջ մթերք:

ԴԻՄԵՅԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, ազամանդազարդ, ոսկի, արծաթ և ճիւղի:

Ֆրանսական և ամերիկեան ապրանց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, շորաներ, օղեր, մասանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորագութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ

45—50

ԿԱՐԵԻՈՐ Ա. ԶԴ

Ամենափափուկ ստամբս ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացի ըլլաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կ'ընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌԸ

Օռօզի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-Էլ-Պեմարի 6իւս դիմացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախողներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաններ և այլն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

20—30

Le Gérant Dr A. S. MAGOPIAN